

նի մը բանախօսութիւններ, երգուեցան մի քանի ազգային երգեր ու չարականներ, արտասանուեցան քանի արտասանութիւններ:


Ատոր նման հանգէս մըն ալ աւելի փառաւոր կերպով Վարդավառին կատարուեցաւ Սր. Կարապետի վանքը, դարձեալ նախորդէն շատ աւելի բազմութիւն մը, որ եկած էին չրջակայ կուսակալութիւններէն: Ռուսաստանէն ալ բաւական երեւելի անձեր եկած էին այդ հանդէսին մասնակցելու: Մուշէն եկած էին կառավարիչի փոխանորդը և կարգ մը Թուրք կառավարական պաշտօնեաներ: Բանախօսներու մէջ կային նաև Վանի նախորդ երեսփոխան Վոսման էֆ., Տոք. Պոնափարթեան, Կարնոյ դպրոցներու տեսուչը Պրն. Ռոստոմ: Հանդէսը շատ շքեղ եղաւ՝ գրեթէ 2-3 հազար անձերու ներկայութեան: Աշտիշատի այդ պատմական վայրին մէջն ալ բանախօսութիւններ եղան Սր. Սահակայ շիրիմին վրայ:

Իսկ ամենավերջինը տեղի ունեցաւ Մշոյ մէջ, Հոկտ. 28ին, ամբողջ Հայութեան մասնակցութեամբ Հայ տառերու 1500 և ապագրութեան 400 ամեակը շքեղապէս տօնելու համար: Մշոյ Բողոքականները, Կաթողիկոսներն և Լուս. Հայերը միասին կատարեցին Յորելինական հանդէսը Ս. Մայրենի եկեղեցոյ մէջ: Առաւօտուն հոգեհանգիստ կատարուեցաւ, իսկ ժամը 6ին քառորդ մնացած (Ը. Թ.) հանդէսը սկսաւ հոծ բազմութեան մը ներկայութեամբ: Ներկաներու մէջ կային նաև Մշոյ Գերման Միսիոնար Էնո Շփորքն, որ օրէ մը ի վեր հոս կը գտնուէր իբր հիւր: Բացումը եղաւ «Նմանեալ Մովսէս»ի շարականով, բացման ճառը խօսեցաւ Տարօնի առաջնորդ Ներսէս Եպսկ. Խարախանեան: Օրուան հանդէսին նպատակը բացատրուելէն ետքը Միացեալի աշակերտները երգեցին երգեր և ըրին քանի մը արտասանութիւններ: Մշոյ Միացեալի դպրոցին կողմէն բանախօսեց Պր. Սարգիս Անդրէասեան, նիւթ ունենալով «Ինչո՞վ պահեց մեր ազգը իր գոյութիւնը»: Կարգացուեցաւ ճառ մը Միսիսթարեաններու գործունէութեան վրայ գրուած. արտասանութիւններէ և երգերէ ետքը բանախօսեց Հ. Յ. Դանակցութեան կողմէն Պր. Ռուբէն՝ համալսարանական երիտասարդ մը, որու գալը շտաբի մը կ'ընէ, և որ հոս պիտի մնայ տեղւոյս կուսակցական գործերը վարելու համար:

Դարձեալ մի քանի արտասանութիւններ եղան և երգեր երգուեցան Ազգանուէրի, Հայունհացի ուսանողուհիներուն կողմէն, և անոնց կողմէն ալ բանախօսեց Պ. Գար-

մէն Հայ ազգային դպրոցին վրայով: Ս. Կարապետի ժոնգ. Վարժարանի կողմէն բանախօսեցին մէկ երկու ուսուցիչներ: Յետոյ Բողոք. դպրոցի երկսեռ աշակերտներ արտասանութիւններ ըրին և երգուեցան երկու երեք երգեր, նուազարանի ընկերակցութեամբ: Վեր. Գրիգոր Շ. Ստեփանեան խօսեցաւ Սր. Մեսրոպի վրայով: Վանի Գերման Միսիոնարն ալ հանդէսին պատշաճ քանի մը խօսք ըսելէն ետքը, շնչուեց մանաւանդ որ այս միութիւնը ոչ թէ միայն հանդէսին համար եղած ըլլայ, այլ մշտական բան մը: Յանձնախումբին կողմէն ալ խօսեցաւ Պրն. Յակոբ Տէր Զաքարեան, շնչուելով ինչ մեր բաժնեկր ոչ թէ լոկ խօսք մնան, այլ պէտք է որ գործնականի վերածուին: Յորելինական Յանձնախումբը ֆոնտ մը կազմած է ի նպատակ Տարօնի մէջ հաստատուելիք մասուլիսն և կը փափաքինք որ ամէն անհատ նպատակէ այդ ձևանարկին: Հանդէսը փակուեցաւ Սրբազանին Հայր Մերով 3½ ժամ տեւելէն ետքը: Հանդէսէն անմիջապէս ետքը Ներսէս Եպսկ. Խարախանեանի առաջնորդութեամբ Յորելինական Յանձնախումբը կարգ մը ուրիշ անձերու հետ միասին այցելութիւններ փոխանակեց Կաթողիկ, Բողոքական և Լուս. պաշտօնական տեղեր:

ՅԱՎՈՒԲ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ



ՄԵՍ ՅՈՒՆԵԼԵԱՆԸ ՊԵՌԻՍԱՅԻ ՄԷՋ

Հայ տառերու գիւտի և Հայ ապագրութեան կրկնակ և մեծ Յորելեանի հանդէսները հոս եւս վայելուչ շքեղութեամբ տօնուեցան: Հոկտ. 25ի իրիկունը Ազգ. վարժարանի սրահին մէջ շքեղ երեկոյթ մը սարքուած էր: Արժանի յատկապէս զարդարուած էր Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ պատկերներով և նշանաւոր հին և նոր գրողներու անուններով: Ժամանակէն առաջ խուռն բազմութիւն լեցուած էր և խիստ շատեր եւս դարձան տեղ չը գտնուելուն համար: Հանդէսն սկսաւ «Յամբ Ռոտան» երգով. յետոյ բանախօսեցին Գեր. Առաջնորդ Սահակ Մ. Վ. որ պատմեց Հայ տառերու գիւտին պատմութիւնը, Վեր. Ա. տանալեան օրուան տօնին ո՛ր աստիճան կարեւորութիւն ունենալը շնչուեց, և ուսուցիչ Տիար Վահրամ Թաթաւլ Հայ ապագրութեան պատմութիւնը ըրաւ: Այս բանախօսութիւն-



ները ընդմիջուեցան Ազգային և Ամերիկեան վարժարանի աշակերտուհեաց դեղեցիկ երգերով, արտասանութիւններով և ազգային ֆանֆառի նուագներով: Հանդէսի վերջին նաև փայլ առևող մասը եղաւ Մնակեան Թատերախմբին մէկ ազգային պարը և բարոյական կրտորի մը ներկայացումը: Հանդէսը փակուեցաւ խիստ հաճելի տպաւորութեան ներքեւ: Հետեւեալ օրը, կիրակի, յատուկ հոգեհանգրստեան պաշտամունք տեղի ունեցաւ Ազգ. եկեղեցւոյ մէջ, որուն յատկապէս հրաւիրուած էին և մեծաւ մասամբ ներկայ՝ կառավարական և զինուորական պաշտօնեայք, Յունաց Առաջնորդը, Աւետ. Հայոց երէց Վեր. Ատանալեան և վարչութեան անդամները, Հիւպատոսական մարմինը, Օսմ. Պանքայի անօրէնք և այլք: Հանդէսէն ետք հրաւիրեալք Առաջնորդարան երթալով օրուան տօնը չնորհաւորեցին: Հոկտ. 27ի երկուշաբթի իրիկունս ալ Աւետ. Հայոց եկեղեցիին մէջ հանդէս մը կազմակերպուած էր: Եկեղեցին պարզ այլ վայելչօրէն դարդարուած էր. ճակատը կախուած էին Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ պատկերները: Առաջնորդ Հայրը և Վեր. Ատանալեան ամպիոնը բազմած էին: Որոշեալ ժամուն ազգային վարժարանի աշակերտք ներս մտան «Արիք Հայկազունքը» երգելով: Վեր. Ատանալեան հանդէսը բանալով՝ ըստ հրատարակուած յայտագրի հրաւիրեց բանախօսելու Առաջնորդ Հայրը, որուն ատենախօսութեան նիւթն էր «Գիր»։ Բանախօսեցին նաև Պատ. Քէնաթիկեան, նիւթ ունենալով «Ս. Մեսրոպ և Ս. Գիրքը», Տիար Վրդանէս Փափազեանց, Ազգ. Վարժարանի Տնօրէնը, «Հայ դրականութեան մասին, և Տիար Աւետիս Տինկիլեան «Հայոց սպազան» նիւթին վրայ: Այս բանախօսութիւնները կ'ընդմիջուէին նուագածուաց խումբի և Ազգային և Ամերիկեան վարժարանի աշակերտներուն գեղեցիկ երգերով և արտասանութիւններով: Հանդէսը փակելէ առաջ խօսեցաւ նաև Վեր. Ատանալեան, նիւթ ունենալով «Հայ գրականութիւնը ընկերաբանական տեսակետէն», և 2 ու կէս ժամ տեւող այս հանդէսն ալ փակուեցաւ, և ասով վերջ գտան Յարեւանի հանդէսները:

ԹՂԹԱԿԻՑ

ԿՈԶ ՄԸ

Պրուսայի և Նիկոմիդիոյ դաշտին լեռնային մասերը իրենց շատ մը բազմահայ գիւղերով աստի մը «Փոքրիկ Հայաստան» կը կոչուէին: Այս գիւղերէն ոմանք զեւ ոչ մէկ միախոնարի կամ քարոզչի այցելութիւնը ընդունած չեն: Ուրիշներու մէջ Աւետարանական գործ բացուած էր բաւական տարիներ առաջ ու բարգաւաճած էր: Բողոքական ժողովուրդներ կային ու մատուռներ շինուած էին այդ տեղերը: Այդ կողմերու ամէնէն բարգաւաճ եկեղեցիներէն մէկն էր Մուրատչայի եկեղեցին: Մարդ չկրնար բաւականաչափ զօրաւոր բռներ գտնել այդ օրերէն մինչև հիմա տեղի ունեցած փոփոխութիւնները նկարագրելու համար: Մնացածը դատարկ եկեղեցի մը ու երիցատուն մըն է, նաև ցրուած ժողովուրդ մը որ երկար ատենէ ի վեր անհովիւ մնացած է և հոգևոր կեանք մը որ գրեթէ մարած է:

Տր. Ճողէֆ կրին՝ երբ լսեց այս վայրերու մասին, գործնք կը ճանչնար իրենց բարգաւաճութեան օրերուն մէջ, Ամերիկացի ունկնդիրներու անջն խօսած իր մէկ ուղերձին մէջ ազգու կոչ մը ըրաւ այս տեղերուն օգնելու համար: Տիկին մը պատասխանեց այդ կոչին և փափաք յայտնեց իր ներկայացուցիչը զրկել Մուրատչայ, այդ տեղի մարդոց մէջ գործելու համար:

Յարմար անձ մը գտնելու մասին, մինչև հիմա եղած եռանդաբին ջանքերը չպատկուեցան: Եւ անա ծիչք այդ պատճառով է որ այս կոչը կ'ըլլայ:

Չկա՞յ մարդ մը, որ իր ժողովուրդին ծաւալելու և Աստուծոյ համար գործելու նուիրուած ըլլալով դայ Մուրատչայ, և այդ տեղը իրբև կեդրոն ընարելով, երթայ շուրջի գիւղերն ու գիւղակաները և ծառայէ այդ բազմակարօտ ժողովուրդին: Ուղուած մարդը պէտք է ըլլայ ձեռնադրեալ պաշտօնեայ մը, որ կարող ըլլայ ժողովուրդին մեռելները թաղել, Մկրտութիւն և Պսակ ընել: Բաւական ատեն առաջ, նորէն այդ տեղերէն Չալկարայի մասին կոչ մը եղաւ և ազնիւ Օրթորդ մը, Օր. Միանձառայ Գարբիլեան, ընդունեց այդ կոչը, ու յաճախ միւս միւնակը կը մնայ հոն, կը ծառայէ ժողովուրդին, և Բրիստոսի համար կը շահի անոնց հոգիները:

Ահա այս անգամ նոյն կոչը աւելի թախանձագին կերպով կ'ըլլայ Մուրատչայի համար: Ո՞վ պիտի պատասխանէ այս կոչին:

Բարձր. Վարժ. Պարսիպակ

Ճ. Փ. ՄԱԿՆՈՒԹՐՆ